ԴԻՄԱԿԱՒՈՐԻՆ

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Քո համեստափայլ և քաղցրաժըպիտ այդ դիմակի տակ
Տեսնում եմ ես չար և սրտապատիր Եագոյի պատկեր,
Եւ այդ սիրալիր աչքերի տեղակ
Դարանագործի նենդաւոր աչքեր։

—

Շատ ես խոյս տրւել դու ազնիւ և բաց ճակատամարտից՝
Գաղտուկ փորելով թըշնամիներիդ ոտների տակը.—
Կը գայ ժամանակ, և քո սև դէմքից
Ես կը պատառեմ գազիր դիմակը։

—

Բայց թող իմ սըրտում դեռ երկար եռայ ատելութիւնըս,
Եւ պատիր հոգիդ դեռ երկար երկար թող խաբէ աշխարհ,—
Կը պայթէ մի օր համբերութիւնըս,
Եւ այն օր—վախճան ինձ կամ քեզ համար։

Մոսկւա. 1889 թ., դեկտեմբերի 18։